ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/196

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.12.2018թ. թիվ 27/26-3/22541-18 գրությամբ «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ին և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 03.12.2018թ. թիվ Ե/40/1989-18 գրության պատճենի հիման վրա, 06.12.2018թ. թիվ 27/26-3/22541-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ին և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ընկերությունը 20.12.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

<<<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն կոնսորցիումով (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել են <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար <<տեխնիկական ջրամատակարարման ապահովում՝ խորքային հորերից՝ խորքային հորերի հորատում>> նպատակով կազմակերպված <<ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18>> ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23-27.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար /հայտում առկա չէ հրավերով պահանջվող <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը և <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան>>/:

Նույն կետով գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջներով, որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով մասնակիցներին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն /կոնսորցիում/-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել:

Իսկ նույն ընթացակարգին հայտեր ներկայացրած <<Նորգեռ>> ՍՊԸ-ի և <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ի կողմից շտկումների արդյունքում ներկայացված փաստաթղթերի մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պարզաբանումներ ստանալու նպատակով

դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ նույն ընթացակարգին հայտեր ներկայացրած <<Նորգեո>> ՍՊԸ-ի և <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունների հիման վրա որոշեց կասեցնել և պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը:

18.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով /այսինքն մոտ 2 ամիս անց/ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 1 հավելվածի 42-րդ պահանջներով, որոշեց մերժել ներկայացված հայտերը և ընթացակարգը հայտարարել չկայացած:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն կոնսորցիումով մասնակցության հայտ են ներկայացրել <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից կազմակերպված <<ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18>> ծածկագրով բաց մրցույթին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23-27.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար /հայտում առկա չէ հրավերով պահանջվող <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը և <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան>>/ և առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 41-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով մասնակիցներին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն /կոնսորցիում/-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել:

Այնուհետև՝ 18.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով, այսինքն մոտ 2 ամիս անց գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 1 հավելվածի 42-րդ պահանջներով, որոշեց մերժել ներկայացված հայտերը և ընթացակարգը հայտարարել չկայացած:

<<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի /կոնսորցիում/ կողմից սահմանված ժամկետում շտկում չկատարելը՝ լիցենզիա ներկայացնելու մասով

Նախ, ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23-27.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար, քանի որ հայտում առկա չէ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նշված ընթացակարգին <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ են ներկայացրել համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագրի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1027-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, ինչ նա ներդնում է ընդհանուր գործում՝ ներառյալ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործարար համբավը և գործարար կապերը:

Ընթացակարգի հրավերի 2.7.-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգին <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ են ներկայացրել կոնսորցիումի պայմանագրի հիման վրա՝ տվյալ Ընթացակարգին մասնակցելու համար միացնելով իրենց բոլոր ավանդները:

Տվյալ դեպքում միացյալ ավանդներից մեկն է եղել Հրավերով պահանջված <<Քաղաքաշինության բնագավառ>>-ի լիզենզիան՝ ըստ հետևյալ ոլորտի՝ շինարարության իրականացման, ներդիր՝ հիդրոտեխնիկական, որը ներդրվել է <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի կողմից և ներկայացվել է կոնսորցիումի մասնակիցների հայտով: Ավելին, տվյալ Ընթացակարգին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու նպատակներից է եղել <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի համապատասխան լիզենզիան որպես համատեղ ավանդ օգտագործելը:

Բացի այդ, 16.07.2018թ. <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի միջև կնքված կոնսորցիումի պայմանագրի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի մասով նախատեսված չէ լիզենզիայի առկայություն, այսինքն տվյալ պայմանգրով <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն չի ստանձնել լիզենցիա ունենալու պարտավորություն, մինչդեռ Հրավերի 2.7.-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Գտնում ենք, որ կոնսորցիումի մասնակիցների հայտով Հրավերով պահանջված <<Քաղաքաշինության բնագավառ>>-ի լիզենզիան՝ ըստ հետևյալ ոլորտի՝ շինարարության իրականացման, ներդիր՝ հիդրոտեխնիկական, <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացնելու պայմաններում անհիմն է և ոչ իրավաչափ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նաև <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ից նույն լիցենզիան պահանջելը՝ քանզի նշված պահանջը հակասում է Հրավերի 2.7. կետի 1-ին ենթակետի պահանջներին և հանդիսանում ձևական վարչարարության դրսևորում:

<<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի /կոնսորցիում/-ի կողմից սահմանված ժամկետում <<սպորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը չներկայացնելը

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23-27.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով արձանագրված որոշմանը, այն է՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

անբավարար գնահատելուն այն հիմքով, թե հայտում առկա չէ հրավերով պահանջվող <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը, ապա այս կապակցությամբ ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

Նախ, Ընթացակարգի հրավերի համաձայն՝ բաց մրցույթում ընտրված մասնակցին սահմանված կարգով կնքվելու է ««ՀԱԷԿ» ՓԲԸ տեխնիկական ջրամատակարարման ապահովում խորքային հորերից՝ խորքային հորերի հորատում>> աշխատանքների կատարման պայմանագիր:

Հրավերի 1.1-րդ կետում նշվել է՝ գնման առարկա է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ տեխնիկական ջրամատակարարման ապահովում խորքային հորերից՝ խորքային հորերի հորատում» աշխատանքների ձեռքբերումը:

Նույն կետի տեխնիկական բնութագրեր բաժնում նշված է՝ մասնակիցը պետք է ունենա ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք:

Համաձայն 2017թ. նոյեմբերի 17-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին թիվ 209-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «14. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ» բաժնի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը ներառված է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում և ներկայումս համաձայն՝ նշված օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, համարվում է ծանուցման ենթակա գործունեության տեսակ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության ծանուցումը ներկայացվում է ՀՀ բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծանուցման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել ծանուցման ենթակա

գործունեությամբ ծանուցումը ներկայացնելուց հինգ աշխատանքային օր հետո, եթե ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չի մերժվում:

Ծանուցման ենթակա գործունեության տեսակները և ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 37.1 հոդվածի՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման և օգտագործման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, սակայն այս կարգը դեռևս ՀՀ կառավարության կողմից չի ընդունվել:

Այսպիսով, Ընթացակարգի հրավերով պահանջվել է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքի առկայություն, մինչդեռ ինչպես արդեն նշվեց, վերոհիշյալ իրավունքի իրավական հարգավորման հարցը դեռևս ավարտված չէ, և փաստացիորեն մինչ օրս ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել տվյալ ծանուցման ենթակա գործունեության տեսակի իրականացման կարգը և պայմանները, քանզի ինչպես արդեն նշվել է, ՀՀ ջրային օրենսգրքի 37.1 հոդվածի համաձայն՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման և օգտագործման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, սակայն այս կարգը դեռևս ՀՀ կառավարության կողմից չի ընդունվել: Նման պայմաններում, կարծում ենք, որ Հարվերով այս իրավունքի առկայության պահանջը կրում է ձևական բնույթ և առաջացնում գնման գործընթացի համաչափ և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի խախտում:

Ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պահանջել է մասնակցից ներկայացնելու <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը: Մինչդեռ վերոշարադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ

օրենսդրությամբ սահմանված չէ և առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կհավաստի ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքի առկայությունը (առավել ևս, եթե տվյալ Ընթացակարգի հրավերով պահանջվել է իրավունքի, այլ ոչ թե փաստաթղթի առկայությունը): Փաստացիորեն, «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծանուցման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել ծանուցման ենթակա գործունեությամբ ծանուցումը ներկայացնելուց հինգ աշխատանքային օր հետո, եթե ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չի մերժվում: Վերոհիշյալը նշանակում է, որ ծանուցման արդյունքում դիմումատուին չի տրամադրվում որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորի, որ վերջինիս մոտ առկա է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը, ինչպես դա առկա է լիցենզիայի դեպքում, ինչի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջը ներկայացնելու նման փաստաթուղթ, մեր կարծիքով, իրավաչափ չէ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ գնահատող հանձնաժողովը ինքն էլ ամբողջական և հստակ պատկերացում չի ունեցել ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքի բովանդակության և դրա հետ կապված ծանուցման ընթացակարգի հետ: Դրա մասին է վկայում այն փաստը, որ գնահատող հանձնաժողովը նշված հարցի հետ կապված պարզաբանում ստանալու համար դիմել է լիազորված մարմին՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը և ստացել պարզաբանում:

Այնուհետև 28.08.2018թ. տեղի ունեցած նիստը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը պարզաբանումներ ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստի կասեցնելու հիմնավորումը իրավաչափ չէ, քանի որ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների

և բնական պաշարների նախարարությանը պարզաբանում ստանալու նպատակով հարցում չի կատարվել:

Կարգի 32-րդ հոդվածի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային Երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը,

ե. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Ընթացակարգի Հրավերի 4-րդ՝ <<Հայտը ներկայացնելու կարգը>> վերտառությամբ բաժնի 4.3–րդ կետը սպառիչ թվարկում է, թե մասնակիցը հայտով ինչ փաստաթղթեր է ներկայացնում: Մասնավորապես, նշված կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է.

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

5) հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխքի ձևով հայտի

ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ.

6) սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը.

7) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

8) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

9) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

10) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

11) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Վերոնշված դրույթներից ուղղակիորեն հետևում է, որ ընթացակարգի առաջին փուլով մասնակիցը ներկայացնում է գրավոր դիմում, գնային առաջարկ, հայտի ապահովում, մի շարք հայտարարություններ և լիցենզիայի պատճենը, իսկ վերոնշված <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ը հավաստող փաստաթուղթը (եթե անգամ նման փաստաթուղթը ընդհանրապես գոյություն ունենար) այս փուլում գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ պահանջելու, քանի որ նման փաստաթուղթ ներկայացնելու պահանջ առաջին փուլի համար սահմանված չէր:

Այս պարագայում, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը իրավասու չէր առանց առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու, մասնակիցներից պահանջել որևէ այլ լրացուցիչ փաստաթուղթ, որը նախատեսված չէր հայտով ներկայացնելու համար, ուստի մասնակցին նման շտկման պահանջ ներկայացնելը իրավաչափ չէ, առավել ևս, եթե այդ ոչ իրավաչափ պահանջը հանգեցրել է <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ին և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառվելու վտանգի առաջ:

<<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կարծիքով՝ գնահատող հանձնաժողովը ինքը ամբողջական պատկերացում չի ունեցել <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ի բովանդակության և այդ իրավունքը հավաստող փաստաթղթի բնույթի մասին, և հենց այս պատճառով է, որ ամիսներով հետաձգել է Ընթացակարգի գնահատման ընթացքը, ուստի և նման պայմաններում <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ին և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ին չի կարող վերագրվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում՝ նման փաստաթուղթը առաջին փուլով չներկայացնելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ <<ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մեկ այլ ընկերություն՝ <<Արտեզիա>> ՍՊԸ-ն, մինչև

հայտերի բացումը պարզաբանում ստանալու նպատակով 19.06.2018թ. դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ի տրամադրման մասին: Սակայն նշված հարցմանը գնահատող հանձնաժողովը պատասխան չի ներկայացրել, իսկ <<Արտեզիա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված այլ պարզաբանման ենթակա հարցերին պատասխանել միայն հայտերը բացելուց հետո՝ հայտերի գնահատման նիստում, ինչը հանդիսանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում և զրկում մասնակիցներին հնարավորությունից որոշելու հայտ ներկայացնելու իրավաչափության և հիմնավորվածության հարցը:

Եթե www.gnumner.am համացանցային կայքում գնահատող հանձնաժողովը, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ներկայացներ պարզաբանում <<Արտեզիա>> ՍՊԸ-ի կողմից բարձրացված հարցի հետ կապված, նշվածը նաև օգտակար կլիներ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի համար՝ <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք>>-ի տրամադրման և բովանդակության ընկալման մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք հրավիրում մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, որ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից հայտի ապահովման գումարը բռնագանձելու նպատակով գրություն է ուղարկվել <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի հաշիվները սպասարկող բանկ՝ <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԵԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ, որին ի պատասխան <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԵԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ-ն մերժել է հայտի ապահովման գումարի տրամադրումը:

Վերոնշվածից երևում է, որ նույնիսկ <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԵԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ-ն է մերժել հայտի ապահովման գումարը բռնագանձելու պահանջը այն հիմնավորմամբ, որ մասնակցի կողմից ընթացակարգի առաջին փուլով պատվիրատուն իրավունք չուներ պահանջելու <<ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը>>-ը հավաստող համապատասխան

փաստաթուղթ>> և առկա չէ գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում>:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստարկները, և <<ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների և պահանջների հետևանքով՝ <<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ /կոնսորցիում/-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջիններիս չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>>:

<<ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ն և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 11.12.2018թ. ժամը 10:15-ին և 25.12.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.12.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստին Ընկերության ներկայացուցիչները ապահովել են իրենց մասնակցությունը նիստին, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2018թ. թիվ Ε/40/1989-18 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ս/թ. հունիսի 12-ին հրապարակվել էր <ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18> ծածկագրով բաց մրցույթ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու 6 հատ խորքային հորերի հորատման աշխատանքներ:

Հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետին ներկայացվել են հայտեր հետևյալ կազմակերպությունների կողմից՝

1. «Արտեզիա» ՍՊԸ և «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ /կոնսորցիում
2. «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Բուրվոդստրոյ» ԲԲԸ /կոնսորցիում/

3. «Նորգեո» ՍՊԸ

4. «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ /կոնսորցիում

Հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության գնահատման փուլում, քանի որ «Արտեզիա» ՍՊԸ և «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտում առկա չէր հրավերով պահանջվող ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը հավաստող փաստաթուղթը, «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Բուրվոդստրոյ» ԲԲԸ-ի /կոնսորցիում/ հայտում առկա չէր հրավերով պահանջվող ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում ստացված լիցենզիան ՀՀ տարածքում կիրառելու թույլտվությունը հավաստող իրավական ակտը, «Նորգեո» ՍՊԸ-ի հայտում առկա չէր հրավերով պահանջվող ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը հավաստող փաստաթուղթը, «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտում առկա չէր հրավերով պահանջվող ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան:

Արդյունքում չորս մասնակիցների հայտում էլ առկա էին անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, և հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 41-րդ կետի պահանջներով՝ նիստը կասեցրել էր մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով մասնակիցներին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցներից ոչ ոք չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով Կարգի 42-րդ կետի պահանջներով մերժել է բոլոր մասնակիցների ներկայացրած հայտերը՝ գնահատելով անբավարար, հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգմանաքը, որ մասնակիցներից ոչ ոք սահմանված ժամկետում չներկայացրեց պահանջվող՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքը հավաստող փաստաթուղթը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և պարզաբանումներ տրամադրելու խնդրանքով դիմել ՀՀ բնապահպանության նախարարությանը, այն է՝ «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման համար հորատող կազմակերպությունը արդյոք պետք է ունենա թույլտվություն, ինչ կարգով և պայմաններով է տրամադրվում թույլտվությունը, ով է տրամադրում, ինչ ժամկետներում»:

ՀՀ բնապահպանության նախարարությանը հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է հետևյալ պարզաբանումը, որ «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը» ներառված է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում և ներկայումս համաձայն՝ նշված օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համարվում է ծանուցման ենթակա գործունեության տեսակ:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է նաև, որ օրենքով սահմանված կարգով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն դիմել է համապատասխան բանկերին՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահավումները գանձելու համար:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ատոմային էլեկտրակայանի համար նշված աշխատանքների ձեռքբերումը առաջնային խնդիր է, քանի որ կայանի տեխնիկական ջրամատակարարումը հուսալի ջրառներից չապահովելու դեպքում հնարավոր է առաջանա ՀԱԷԿ-ի տեխնիկական ջրամատակարարման խափանում, ինչը կբերի վթարային բեռնաթափման և հարկադրական կանգառի, իսկ ելնելով մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների քանակից, պարզ է դառնում, որ նման մեծ փորձառությամբ և նման աշխատանքներ կատարող կազմակերպությունների թիվը ՀՀ-ում խիստ սահմանափակ է:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ առաջնորդվելով Կարգի 45-րդ կետով ներկայացնում է մասնակիցների վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 11.12.2018թ. ժամը 10:15-ին և 25.12.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 11.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տեխնիկական ջրամատակարարման ապահովում խորքային հորերից՝ խորքային հորերի հորատում աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրով, սահմանվել է, որ Մասնակիցը պետք է ունենա ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք:

3. Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

*ըստ «**Քաղաքաշինության բնագավառ**» հետևյալ ոլորտների՝*

Չափաբաժին ների համարները	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	***Շինարարության իրականացման, ներդիր՝ հիդրոտեխնիկական***

4. Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 2.7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության

կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

5. Մրցույթին մասնակցելու նպատակով՝ ի թիվս այլ մասնակիցների՝ «Արտեզիա» ՍՊԸ և «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի (կոնսորցիում), «ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ-ի, «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Բուրվոդստրոյ» ԲԲԸ-ի (կոնսորցիում), հայտ է ներկայացրել նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

6. Մրցույթին մասնակցելու նպատակով «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ն և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ են ներկայացրել 16.07.2018թ. կնքված համատեղ գործունեության՝ կոնսորցիումի N 01/07 պայմանագրի հիման վրա:

7. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 23-27.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը գնահատվել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չէ հրավերով պահանջվող «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան:

8.Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 41-րդ կետի պահանջներով, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ին (կոնսորցիում) շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

9. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի կողմից շտկում չի ներկայացվել ուստի հանձնաժողովը, արձանագրելով առաջացած խնդիրները, որոշեց նիստը կասեցնել և պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ՀՀ բնապահպանության

նախարարություն՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման թույլտվության պահանջի հետ կապված:

10. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությանը հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է հետևյալ պարզաբանումը.

«Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը ներառված է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում և ներկայումս համաձայն՝ նշված օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, համարվում է ծանուցման ենթակա գործունեության տեսակ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության ծանուցումը ներկայացվում է ՀՀ բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծանուցման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել ծանուցման ենթակա գործունեությամբ ծանուցումը ներկայացնելուց հինգ աշխատանքային օր հետո, եթե ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չի մերժվում:

Ծանուցման ենթակա գործունեության տեսակները և ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով:

Գործունեության իրականացման ծանուցման կարգը հստակ է:

Համաձայն՝ ջրային օրենսգրքի 37.1 հոդվածի՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման և օգտագործման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Այս կարգը դեռևս կառավարության կողմից չի ընդունվել, ինչը, սակայն, խոչընդոտ չի հանդիսանում ծանուցման ենթակա գործունեության տեսակներից որևէ մեկով զբաղվելու համար համապատասխան լիազոր

մարմին դիմելու և սահմանված կարգով ծանուցման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու համար:

Ծանուցման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու վերաբերյալ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձինք հաշվառվում են լիազոր մարմնի կողմից, և ծանուցման մեջ ներկայացված տեղեկատվությունը (բացառությամբ ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիայի և համարի), ինչպես նաև հաշվառման օրը, ամիսը և տարեթիվը հրապարակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում»:

11. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ հանձնաժողովը արձանագրել է, որ ծանոթացավ ներկայացված պարզաբանումներին, լսեց նիստին ներկա լիազորված անձանց կարծիքները, ծանոթացավ վերջիններիս կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումներին և կայացրեց հետևյալ որոշումը. «27.07.2018թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը գնահատվել էր անբավարար, մասնավորապես՝ «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը գնահատվել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չէր հրավերով պահանջվող «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան, ուստի առաջնորդվելով Կարգի 41-րդ կետով հանձնաժողովը նիստը կասեցրել էր մեկ աշխատանքնային օրով՝ հնարավորություն տալով մասնակցին շտկելու հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

Սակայն սահմանված ժամկետում «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) կողմից հայտում տեղ գտած անհամապատասխանությունները չեն շտկվել, ուստի հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 42-րդ կետով, որոշեց մերժել «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում), ինչպես նաև Մրցույթի այլ մասնակիցների հայտերը և Ընթացակարգը հայտարարեց չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2018թ. թիվ 27/26-3/22541-18 գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 03.12.2018թ. թիվ Ε/40/1989-18 գրությունը և կից փաստաթղթերը, «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ 20.12.2018թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Այսպիսով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տեխնիկական ջրամատակարարման ապահովում խորքային հորերից՝ խորքային հորերի հորատում աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով բաց մրցույթ:

Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրով, սահմանվել է, որ Մասնակիցը պետք է ունենա ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք:

Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

*ըստ «**Քաղաքաշինության բնագավառ**» հետևյալ ոլորտների՝*

Չափաբաժին ների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	Շինարարության իրականացման, ներդիր՝ հիդրոտեխնիկական

Մրցույթին մասնակցելու նպատակով՝ ի թիվս այլ մասնակիցների՝ «Արտեզիա» ՍՊԸ և «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի (կոնսորցիում), «ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ-ի, «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Բուրվոդստրոյ» ԲԲԸ-ի (կոնսորցիում), հայտ է ներկայացրել նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 23-27.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը գնահատվել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չէ հրավերով պահանջվող «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 41-րդ կետի պահանջներով, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ին (կոնսորցիում) շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 31.07.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի կողմից շտկում չի ներկայացվել ուստի հանձնաժողովը, արձանագրելով առաջացած խնդիրները, որոշեց նիստը կասեցնել և պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման թույլտվության պահանջի հետ կապված:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությանը հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է հետևյալ պարզաբանումը.

«Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը ներառված է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում և ներկայումս համաձայն՝ նշված օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, համարվում է ծանուցման ենթակա գործունեության տեսակ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության ծանուցումը ներկայացվում է ՀՀ բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծանուցման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել ծանուցման ենթակա գործունեությամբ ծանուցումը ներկայացնելուց հինգ աշխատանքային օր հետո, եթե ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չի մերժվում:

Ծանուցման ենթակա գործունեության տեսակները և ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով:

Գործունեության իրականացման ծանուցման կարգը հստակ է:

Համաձայն՝ ջրային օրենսգրքի 37.1 հոդվածի՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման և օգտագործման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Այս կարգը դեռևս կառավարության կողմից չի ընդունվել, ինչը, սակայն, խոչընդոտ չի հանդիսանում ծանուցման ենթակա գործունեության տեսակներից որևէ մեկով զբաղվելու համար համապատասխան լիազոր մարմին դիմելու և սահմանված կարգով ծանուցման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու համար:

Ծանուցման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու վերաբերյալ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձինք հաշվառվում են լիազոր մարմնի կողմից, և ծանուցման մեջ ներկայացված տեղեկատվությունը (բացառությամբ ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիայի և համարի), ինչպես նաև հաշվառման օրը, ամիսը և տարեթիվը հրապարակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում»:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ հանձնաժողովը արձանագրել է, որ ծանոթացավ ներկայացված պարզաբանումներին, լսեց նիստին ներկա լիազորված անձանց կարծիքները, ծանոթացավ վերջիններիս կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումներին և կայացրեց հետևյալ որոշումը. «27.07.2018թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը գնահատվել էր անբավարար, մասնավորապես՝ «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը գնահատվել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չէր հրավերով պահանջվող «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան, ուստի առաջնորդվելով Կարգի 41-րդ կետով հանձնաժողովը նիստը կասեցրել էր մեկ աշխատանքնային օրով՝ հնարավորություն տալով մասնակցին շտկելու հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

Սակայն սահմանված ժամկետում «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) կողմից հայտում տեղ գտած անհամապատասխանությունները չեն շտկվել, ուստի հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 42-րդ կետով, որոշեց մերժել «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում), ինչպես նաև Մրցույթի այլ մասնակիցների հայտերը և Ընթացակարգը հայտարարեց չկայացած:

Այսպիսով, ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով գնման ընթացակարգը, Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ արձանագրված հիմնավորումները, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված հայտում

առկա չէր հրավերով պահանջվող «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող լիցենզիան, հայտնում եմ հետևյալը.

Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 2.7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)***: ***Նման դեպքում՝ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի <u>այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին</u>***:

Մրցույթին մասնակցելու նպատակով «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ն և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ են ներկայացրել 16.07.2018թ. կնքված համատեղ գործունեության՝ կոնսորցիումի N 01/07 պայմանագրի հիման վրա, որի 1.2.2 կետով սահմանվել է, որ Գործընկեր 2-ը (տվյալ դեպքում՝ «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն) որպես ավանդ ներդնում է իր փորձառությունը, տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքներն իրականացնելու համար:

Այսպիսով, Կողմերի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որպես ավանդ հայտով «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի կողմից ներդրվել է «Քաղաքաշինության բնագավառ»-ի լիզենզիան՝ ըստ հետևյալ ոլորտի՝ շինարարության իրականացման, ներդիր՝ հիդրոտեխնիկական, իսկ «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի մասով նախատեսված չէ լիզենզիայի առկայություն, այսինք՝ համատեղ գործունեության պայմանգրով «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ն չի ստանձնել լիզենցիա ունենալու պարտավորություն, ուստի հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Մրցույթի հրավերի 2.7.-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի ***<u>այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին</u>***, ապա գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող

հանձնաժողովի կողմից «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի կողմից Հրավերով պահանջվող լիցենզիան հայտով ներկայացնելու պայմաններում Կոնսորցիումի անդամ «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ից նույն լիցենզիան պահանջելը և սույն հիմքով Կոնսորցիումի հայտը մերժելը եղել է ոչ իրավաչափ, քանի որ հակասում է Հրավերի 2.7. կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԷՍ Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ արձանագրված մեկ այլ հիմնավորմանը, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չէր հրավերով պահանջվող «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը հավաստող փաստաթուղթը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրով, սահմանվել է, որ Մասնակիցը պետք է ունենա ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք:

Մրցույթին մասնակցելու նպատակով՝ ի թիվս այլ մասնակիցների՝ «Արտեզիա» ՍՊԸ և «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի (կոնսորցիում), «ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ-ի, «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Բուրվոդստրոյ» ԲԲԸ-ի (կոնսորցիում), հայտ է ներկայացրել նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով բաց մրցույթի հայտարարության տեքստը հաստատվել է բաց մրցույթի հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 12-ի թիվ 1 որոշմամբ:

Մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցներից՝ «Արտեզիա» ՍՊԸ-ն Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից օգտվելով Մրցույթին մասնակցելու նպատակով մինչև հայտերի բացումը պարզաբանում ստանալու նպատակով 19.06.2018թ. դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ի տրամադրման կարգի մասին:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուի ներկայացուցիչը Ընթացակարգով հրավիրված նիստի ժամանակ փաստել է այն, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առաջ «Արտեզիա» ՍՊԸ-ի կողմից ստացվել է հրավերով սահմանված «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ի տրամադրման մասին պարզաբանում, սակայն Պատվիրատուի կողմից վերը նշված հարցի վերաբերյալ պարզաբանում չի տրվել և www.armeps.am համակարգի միջոցով հայցվել է Ընկերության ներողամտությունը, քանի որ Պատվիրատուն ինքը տեղյակ չի եղել ինչ կարգով է տրամադրվում «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ը:

Ընթացակարգով հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Մրցույթին հայտ ներկայացրած չորս մասնակիցների մոտ առաջացել է միևնույն խնդիրը՝ «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման թույլտվության պահանջի հետ կապված, ուստի Պատվիրատուն նշված խնդրի կարգավորման նպատակով հայտերը բացելուց հետո նոր միայն դիմել է տվյալ ոլորտը կարգավորող լիազոր մարմնին՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը, խնդրելով հայտնել հետևյալը. «ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման համար հորատող կազմակերպությունը արդյոք պետք է ունենա թույլտվություն, ինչ կարգով և պայմաններով է տրամադրվում թույլտվությունը, ով է տրամադրում, ինչ ժամկետներում», որին ի պատասխան՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացվել է պարզաբանում, որից հետո նոր միայն թե Պատվիրատուի և թե Ընկերությունների համար պարզ է դարձել Մրցույթի հրավերով սահմանված պահանջի տրամադրման կարգը:

Այսպիսով, արձանագրում եմ այն փաստական հանգամանքը, որ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի համաձայն՝ հարցումը կատարած մասնակցին Պատվիրատուի կողմից պարզաբանում չի տրամադրվել, քանի որ հայտերը բացվելուց հետո նոր միայն Մրցույթի գնահատող հանձնաժողովի համար պարզ է դարձել թե իրականում Մրցույթի տեխնիկական բնութագրով սահմանված «ստորերկրյա

քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ի տրամադրման կարգը ինչ եղենակով է իրականացվում և արդյոք ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման համար հորատող կազմակերպությունը պետք է ունենա այդ թույլտվություն, թե՝ ոչ, մինչդեռ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով ընթացակարգը՝ գտնում եմ, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/18» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրի պահանջը ոչ հստակ ձևակերպելով և հաստատելով, թույլ են տվել տարակերպ մեկնաբանության տեղիք, մինչդեռ տեխնիկական բնութագրի կազմման՝ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Կարգի 13-րդ կետը նախատեսել է, որ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Դրա հետ մեկտեղ Կարգի 15-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Այսպիսով՝ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու բավականին երկար գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները

և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Այսպիսով, ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերն և կողմերի ներկայացված դիրքորոշումները, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով ի սկզբանե սահմանվել է պահանջ, որը եղել է ոչ լիարժեք և տարակերպ մեկնաբանության տեղիք է տվել Մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների, այդ թվում նաև «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ համար:

Միաժամանակ արձանագրում եմ, որ հայտերը բացվելուց հետո երբ արդեն իսկ «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք»-ի տրամադրման կարգը պարզ է դարձել թե Պատվիրատուի և թե Մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցներ համար, Ընկերությունները հրավերով պահանջվող ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման համար լիազոր մարմին ծանուցում են ներկայացրել և սահմանված կարգով հաշվառվել են լիազոր մարմնի կողմից, որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Այսպիսով, վերը նշված հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.12.2018թ. թիվ 27/26-3/22541-18 գրությամբ «Էս Ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02637973) և «Վանդ-Գասս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09419634) /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ